

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄԵԿԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբլի  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարակացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция (Миако)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անտառ և կարկուտ:  
Նամակ կողբից: Նամակ Ախալքալաքից: Ներքին  
լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին  
լուրեր: ԽՍՈՆ ԼՈՒՐԵՐ: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿՆ: ՈՐՆ  
աւելի լաւ արաւ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆՏԱՌԸ ԵՒ ԿԱՐԿՈՒՑԸ

Պրօֆէսոր Կայգորօզով „Новое Время“  
լրագրում վերջիչեալ վերնագրով մի յօ-  
դուած է տպել, որի հետ աւելորդ չենք  
համարում ծանօթացնել մեր ընթերցողնե-  
րին:

Յայտնի է, թէ որքան շատ վնասվում է  
մեր երկրագործութիւնը կարկուտից, որը  
շատ անգամ մի քանի րոպէում ոչնչացնում  
է վաղուց սպասված գեղեցիկ պտղաբերու-  
թիւնը և հունձը: Յայտնի է նոյնպէս, որ  
մի քանի տեղերը մանաւանդ յաճախ և անո-  
ղորմաբար վնասվում են կարկուտից, իսկ  
միւս տեղերին երբեմն երբեմն միայն, կար-  
ծես պատահամբ, այցելում են կարկուտի  
ամպերը: Վերջապէս, յայտնի է նոյնպէս,  
որ այն տեղերը, ուր առաջ շատ սակաւ կա-  
րելի էր լսել կարկուտահարութեան մասին,  
յանկարծ սկսում են տարեցտարի վնասվել  
կարկուտից, և ընդհակառակն, ուր առաջ  
երկրագործութիւնը շատ տարիների ըն-  
թացքում վնասներ էր կրում կարկուտա-  
րութիւնից, այդ վերջինը սկսում է աւելի  
ուշ ուշ կրկնվել և վերջապէս երբեմն հա-  
մարեալ բոլորովին զաղտում է: Ի՞նչ է դրա  
պատճառը: Ի՞նչն է պատճառը, որ այս կամ այն  
տեղում կարկուտը հաւասարաչափ չէ գտլիս,  
այդ հարցը չընայելով որ վերին աստիճանի  
հետաքրքիր և գործնական մեծ նշանակու-  
թիւն ունի, բայց, դժբաղդաբար, դեռ ևս

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ՈՐՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ ԱՐԱՒ

Չարանալի քաղցրութիւն է գրում մարդ, երբ  
միշտ է իր անցած օրերը, եթէ մինչև անգամ  
տխուր անցած լինեն նոքա: Այդպէս էլ քաղցր է  
ինձ համար մտաբերել իմ ուսանողական տարի-  
ներս, երբ ցերեկվայ մեծ մասը ուսումնասիրում  
էի անցուցանում: Միմանց ետեղ ներկայանում  
են ինձ բոլոր նեղութիւնները, որ կրում էի ես  
այն ժամանակ, բոլոր ուրախութիւնները, որ  
վայելում էի իմ դասընկերների հետ: Ամեն բան  
առանց բացառութեան քաղցր է ինձ յիշել: Ես  
այժմ սկսում եմ սիրել մինչև անգամ իմ վատ  
ընկերներս:

Բայց երբ միտս է գալիս իմ մի սիրելի ընկերս,  
որը վերջապէս դժբաղդաբար, որովհետև գիտու-  
թիւնը, ուսումը, շատ էր սիրում, ես ընկնում եմ  
խոր և տխուր մտառանջութեան մէջ: Նոյն իսկ  
իմ այս ընկերս պատահածը ես պիտի պատ-  
մանայ որ ընթերցողս, որպէս զի թէ իմ սիր-  
ուող փոքր ինչ թեթևամայ, թէ միւս ուսա-  
նողները զգոյշ լինեն, եթէ հանգամանքներ մի  
և նոյն դրութեան մէջ գնեն և իրանց:

Մի և նոյն զարթոյնը, որտեղ ես էի, ուսա-

մուծն է, և գիտութիւնից չէ պարզված, և  
որովհետև կարկուտի կազմակերպութեան  
հարցը դեռ ևս չէ դուրս եկել ենթադրու-  
թիւնների շրջանից, այդ պատճառով գի-  
տութիւնից չէ կարելի սպասել, որ շուտով  
նրա օգնութեամբ վնասի այդ հարցը: Այդ  
կողմից առաւել մեծ յոյս կարելի է դնել  
արտասահմանում վաղուց արդէն գոյութիւն  
ունեցող, և վերջին ժամանակներում մեզ մօտ  
ևս ծնվող կարկուտահարութիւնից ապահո-  
վող ընկերութիւնների գործունէութեան  
վրա: Ապահովող հոգերի մանրամասն աե-  
ղագրութիւնը արձանագրելով ապահովա-  
կան ցուցակները մէջ և քարտէզի վրա նշա-  
նակելով այն տեղերը, որոնք ամենից  
աւելի, և կամ ամենից պակաս ենթակայ  
են կարկուտահարութեան, այդ ընկերութիւն-  
ները կարող են այդպիսով վերին աստիճա-  
նի նշանաւոր նիւթ ժողովել, և այդ նիւ-  
թից հեշտութեամբ կարող են ձեռք բեր-  
վել թանկագին ցուցմունքներ թէ գիտու-  
թեան և թէ գործնականութեան համար:  
Այդպիսի ցուցմունքներից մէկը արդէն ար-  
ված է, ճարտարապետ վաղուց արդէն սով-  
որութիւն կայ ապահովել ցանքերը կարկուտ-  
ահարութիւնից, և ապահովական ընկերու-  
թիւնները, կարկուտահարութիւններին ա-  
ռանձնապէս ենթակայ տեղերը նշանա-  
կում են մանրամասն կերպով տեղագրական  
քարտէզների վրա: Սենայի և Ղօարի գե-  
պարտամիջանկերին վերաբերեալ այդպիսի  
քարտէզների համեմատութիւններից երեւե-  
ցաւ, որ անտառային և չափաւոր կերպով  
անտառապատ տեղերը աւելի ուշ ուշ են  
վնասվում կարկուտահարութիւններից, քան  
թէ սակաւ անտառ ունեցող տեղերը, իսկ  
բոլորովին անտառ չունեցող տեղերում մա-  
նաւանդ սաստիկ են լինում կարկուտահարու-  
թիւնները: Նոյնպէս յայտնվեցաւ, որ մի  
քանի տեղերը, ուր ամբողջ շարք տարիներ  
ընթացքում կարկուտահարութիւններ չէին

նում էին նոյնպէս երկու եղբայրներ, ազգով հայ,  
կրօնով լուսաւորչական: Ազգա Շ. դաւառի, Գ.  
գիւղի տեր Աւետիք քահանայի որդիքն էին: Տէր  
հայրը այնքան կարողութիւն ունէր, որ հազիւ էր  
իր ընտանիքը կերակրում: Նա թէպէտ այնքան  
էլ մեծ ուսում առած մարդ չէր, բայց և այն ար-  
գէտ քահանայներից չէր, որոնց մասին շատ ան-  
գամ դանդաղներ ենք լսում մեր լրագրիւններում:  
Նա այնքան սիրում էր լուսաւորութիւնը, որ չը  
նայելով իր փոքրիկ կարողութեանը, երկու որդի-  
ներին՝ Պօղոսին և Պետրոսին ուղարկեց Բ. քա-  
ղաք, ընտանիքի պարտքերը ուսանելու: Երբ վեր-  
ջիններս առաջին անգամ ճանապարհ էին ընկ-  
նում, տէր հայրը մի փոքրիկ ճառով ցոյց տուց  
նորանց ուսման, լուսաւորութեան գեղեցիկ յատ-  
կութիւնները, թէ և որդիքը այդ-վաղուց գիտէին:  
Որքան էլ Պօղոսը և Պետրոսը լաւ սովորած լի-  
նէին տէր հօր մօտ իրանց դասերը, այնու ամե-  
նայնիւ չը կարողացան մտնել առաջին դասա-  
տուն, որովհետև ուսուցիչն լեզուի մէջ շատ թոյլ  
էին, ինչպէս շատ հայ աշակերտներ նորանց  
ընդունելից պատրաստակամի մէջ:

Ես բնաւ միտք չունեմ մանրամասն պատմու-  
թիւնները, որովհետև յիշեալ մանրամասնութիւն-  
ները նշանակութիւն չունեն իմ պատմութեանս  
համար, մանաւանդ որ ես ինքս ծանօթացել եմ  
դորանց հետ առաջին անգամ ճիւղերով դասա-  
տան մէջ: Միայն մի քանի խօսքով կը նկարա-

լինում, իսկոյն և եթ սկսվում էին վնասվել,  
հէնց որ մտաւայ բարձրութիւնների վրա  
եղած անտառները կարտոււմ էին, և ապա  
նորից ազատվում էին կարկուտից, հէնց որ  
անտառը մինչև մի յայտնի բարձրութիւն  
բուսում էր: Նոյն տեսակ գիտողութիւններ  
արեցին Գերմանիայում և Շվեյցարիայում:  
Հազիւ թէ հարկաւոր կը լինէր մանրամա-  
սին խօսել այդպիսի ցուցմունքների մեծ  
նշանակութեան մասին, որովհետև դրանք  
ինքն իրանց ակնյայտնի են: Մեզ մնում է  
միայն այնտեղ, որ այդ ուղղութեամբ որ-  
քան կարելի է շատ գիտողութիւններ հա-  
ւաքվեն, որի վրա և մենք ցանկանում ենք  
մեզ մօտ արդէն գոյութիւն ունեցող և նոր  
հիմնվող ապահովական ընկերութիւնների  
ուղղութիւնը դարձնել, որոնց աչքում  
այդ հարցը կարող է ազդեցութիւն ունե-  
նալ այս կամ այն տեղի ապահովական պիե-  
միայն չափը որոշելու համար: Արովհետև  
այդ ուղղութեամբ ձեռք բերված խրաբան-  
չիւր նոր փաստը անկասկածելի հետաքրք-  
րութիւն ունի, այդ պատճառով մենք ևս  
հարգորդում ենք այստեղ նորերումս յայտնի  
գարձած գիտողութիւնները:

Շվեյցարական անտառապահների այս  
տարփայ վերջին ժողովում, Յուզում, Աար-  
գաուսեան կանտոնի զխաւոր անտառա-  
պետ Մ. Բիւնիկէր մի գեղեցում կարգաց  
անտառի ազդեցութեան մասին կարկուտ-  
ահարութեան վրա, որից երևում է, որ Աար-  
գաուսեան կանտոնի Մօրի համայնքում  
միմեանց հետեղ կարկուտահարութիւնների  
ամբողջ շարքը իր վրա դարձրեց որպէս ազ-  
գաբնակութեան, նոյնպէս և գիտնական  
հեղինակութիւն ունեցող անձինքների ու-  
ղղութիւնը: Մինչև 1867 թիւը Մուրիի  
ընկերներում համարեա կարկուտահարու-  
թիւններ չէին լինում, այն ինչ յանկարծ  
1867, 1869 և 1871 թւերին, Մուրիի հա-  
մայնքում սկսվեցան սարսափելի փոթորիկ-

գրած դորանց պատկերը, որպէս զի ընթերցողը  
նախապէս ծանօթանայ իմ հերոսներիս հետ:

Երկու եղբայրները բոլորովին նման էին մի-  
մեանց թէ ներքին և թէ արտաքին կերպով, այն-  
պէս որ դժուար լինում էր նրանց միմեանցից որոշել:  
Երկու Պօղոսն էր, որովհետև միւսից երեք րօպէ  
առաջ էր աշխարհ եկել: Երկուսն էլ միտառակ  
էին անցկացնում Պատահում էր որ Պօ-  
ղոսը լաւ չէր պատասխանում իր դասը, արդէն  
ուսուցիչը ճանաչված էր, որ Պետրոսն էլ չէ սով-  
որում:

Նախախնամութեան պարզիս հաւասարա-  
րութիւնը անեկզօտի ձև էր ստացել դասատան  
մէջ, այնպէս որ երբ մի անգամ Պետրոսը իր ան-  
զգուշութիւնից ուսումնասիրել ոչ այնքան բարձր  
պատասխանից փողոց էր վայր ընկել ընկերները  
Պօղոսին էլ նոյն տեղից ներքև զարեցին:

Գահանայի որդիքը բաւական աշխատասէր և  
ընդունակ էին: Նրանք ուսուցիչներից ճանաչված  
էին որպէս համեստ և ազնուարարոյ աշակերտ-  
ներ, թէպէտ Պետրոսը շատ էլ համեստ չէր:  
Չորրորդ դասատանց սկսեալ նորանք շատ նե-  
ղութիւն չէին տալիս տէր հօրը, որովհետև շատ  
անգամ աշակերտներ էին պատրաստում և մի  
կերպ ապրում էին, եթէ միայն կարելի է այդ-  
պէս սակ ցերեկը անդադար աշխատելուն և վե-  
չին էլ դասերի պատճառով անբուն լինելուն:  
Ի միջի այլոց չէին մտաւում նրանք հայերէն  
գրքերի ընթերցանութիւնը և այդ պատճառով

ներ կարկուտի հետ միասին, որոնք ահա-  
գին վնասներ տուին գիւղատնտեսութեանը:  
Մանրամասն հետազոտութիւնները ցոյց  
տուեցին, որ խրաբանչիւր անգամ փոթո-  
րիկները սկսվում էին մէկ կէտից, օրինակ  
կարկուտը սկսվում էր Վինգէրբերգի լեռ-  
նաշղթայի վրա եղող բարձրաձիւղ եղե-  
ւինի անտառի մէջ, մօտ 100 սաժէն լայ-  
նութիւն ունեցող հրապարակից, որը մեր-  
կացրած էր ծառերից, մասամբ կարտելու  
պատճառով, և մասամբ էլ փոթորիկից: Ա-  
րովհետև դրա նման դէպքեր նկատելի էին  
Աարգաուսեան կանտոնի ուրիշ տեղերում  
ևս, այդ պատճառով տեղային անտառային  
վարչութիւնը յանձնեց իր անտառապահներ  
հետազոտութիւններ անել բոլոր տե-  
ղերում միմեանց հրահանգներով: Այդ  
քննութիւններից երեւաց, որ այդ երեք տա-  
րիների ընթացքում Աարգաուսեան կանտո-  
նը կարկուտահարութիւններից 3 միլիոն վնաս  
կրեց, և որ այս կամ այն տեղում կարկուտի  
ներգործութիւնը աւելի շատ էր, երբ ան-  
տառները զուրկ էին ծառերից, և ընդհա-  
կառակն, օրինակ, Ջօֆինգէն անտառային  
ընկերում, 40 պրօցէնտ ծառ ունեցող ան-  
տառային հրապարակից երկու փոքրիկ  
կարկուտահարութիւններ են եղել (40,000  
Ֆրանկ վնաս), Լէնց, Կուլմ և Աարաու շըր-  
շաններում, 32 պրօցէնտ անտառից—վեց  
կարկուտահարութիւններ (280,000 Ֆրանկ  
վնաս) և Կրէյմա շըշանում, ուր 19 պրօ-  
ցէնտ անտառային հրապարակ կայ, տա-  
սը կարկուտահարութիւններ եղան (1,200,000  
Ֆրանկ վնաս): Ապա յայտնվեցաւ, որ  
կարկուտահարութիւններից զալիս էին  
առաւելագոյն հարաւ արեւելքից և արե-  
մուտքից դէպի հիւսիս արեւմուտք և շատ  
հազիւ հիւսիս արեւելքից, և որ ոչ մի ան-  
գամ դէպք չէ եղել, որ կարկուտ թափվէր  
այն ամպերից, որոնք անցնում են եղևինի  
կամ կուենիի խիտ անտառներով ծածկված

չը մտացան իրանց հօրից սովորած հայերէնը, այլ  
ևս աւելի առաջ գնացին նորա մէջ:

Վերեւում ցոյց տուինք, թէ որքան միմեանց  
նման էին Պօղոսն և Պետրոսը. բայց մտացանք  
յիշել մի բան, որով զանազանվում էին նորանք:  
Մեծ եղբայրը միշտ գործի սկզբին էր նայում,  
իսկ կրտսերը վերջին: Պօղոսը այն բանն էր սի-  
րում, որը լաւ և օգտակար է ճանաչված ամե-  
րից, իսկ Պետրոսը—այն, ինչ որ կարող էր լաւ  
հետեանքի հասցնել:

Մի գիշեր, յունիս ամսի սկզբում, մենք եօթն-  
երորդ դասատան աշակերտներս հրաւիրված էինք  
տէրտէրի որդիների ընկալարանը (այդպէս մենք  
էինք կոչւում): Սա այն օրն էր, որ Պօղոսը  
և Պետրոսը վերջացրել էին ընտանիքի դպրո-  
ցում ուսման չըջանք: Նրանք հրաւիրել էին  
մեզ, որ միասին խորհրդակցեցը նոցա ա-  
պագայի մասին: Մենք երկար ակամջ էինք զը-  
նում երկու եղբայր համեստ վիճարանութեանը:  
«Պետրոս, ստու՛մ էր Պօղոսը, երբ առաջինը հա-  
կառակում էր այն մտքին, թէ հարկաւոր է իրանց  
գնալ Ռուսաստան, բարձր ուսում ստանալու, դու  
լաւ հասկացիր, որ եթէ մի գեղեցիկ և հետա-  
քրքիր բան կայ աշխարհիս երեսին, այդ գիտու-  
թիւնն է»:

—Բայց դու էլ լաւ իմացիր, պատասխանում էր  
կրտսերը, որ եթէ մի մարդ իր տկարութեան  
պատճառով դժուարութեամբ ձեռք բերած գիտու-

բարձրութիւնները վրա ընդհակառակն, շատ կարկտային ամպերը կանգնում էին և թափում էին կարկուտը այդպիսի անտառները վրա: Մոլորաբար կարկուտը սկսվում էր, երբ մի քանի խիստ շոք օրերից յետոյ կազմակերպված կարկտային ամպերը, անցնելով մերկ կամ սակաւածառ բարձրութիւնների վրայով, մտնում էին լուս մշակված և արեղակի ճառագայթներից սաստիկ տաքացած ստորոտների և հողմների շըրջանը: Տերևոտ անտառի նորահաս ծառերը, մտնաւանդ դեռ բողբոջվին չը միացած ծառերը, որոնք դեռեղված են բարձրութիւնների վրա, որոնց վրա անցնում էին կարկուտի ամպերը, անբաւարար էին յայտնվում այդ ամպերը դատարկելու համար, այն ինչ մինչև անգամ փոքր լայնութիւն ունեցող եղևնեայ և կուենու բարձրածիւղ անտառները, պաշտպանողական զեղեցիկ պատնէշներ էին դառնում կարկուտի դէմ:

Թող այդ աչքի առաջ օւնենան մեր անտառ ոչնչացնողները: Թող այդ փաստերի վրա մտածեն մեր կալուածատերերը, որոնք անխնայ կերպով սպառում են իրանց պապերից ժառանգած ծառաստանները և հէնց դրանով շատ կարելի է կենթարկում են իրանց դաշտերը և արտերը կարկուտի կողրատաբեր ներդործութեանը:

ՆԱՄԱԿ ԿՈՂՈՒՅԾ

Սեպտեմբերի 13-ին

Կողբ դուրը անուանի է իր հարուստ աղանձաքով, որ անպատ ժամանակները ի վեր աղ է մատակարարել և մատակարարում է Անդրկովկասի ժողովրդան մեծ մասին:

Ընթերցողը սրանից անշուշտ պիտի եղբակացնէ, որ կողբը մի հարուստ և լուսաւոր տեղ պէտք է լինի, բայց բողբոջին հակառակն է: Կողբ նոր մատուցին առաջին անգամ աչքի է ընկնում ժողովրդեան մեծ մասի խեղճութիւնը և բարք ու վարքի ապականութիւնը:

Սակայն ժողովրդեան այս խեղճութիւնը ուղղակի հետեանք կարելի է համարել նորա, ժողովրդի, զեղխութեան և աղիտութեան, այլ ոչ թէ քնական և անյաղթելի պատճառների:

Ձգուելի և դարչելի է տեսնել թէ որ աստիճան տարածված է այստեղ խաղամուրթիւնը և օղեմուրթիւնը: Օղեմուրթիւն են դեռահաս մանուկներից սկսեալ մինչև ծերունիները: Թղթախաղութեամբ պարագում են ունեւոր դասակարգի

թիւններից օգուտ քաղել չէ կարողանալու, ոչինչ չարժեն այն մարդն էլ, իր գիտութիւնն էլ:

«Անբան կենդանիներն էլ կատարեալ առողջութիւն են վայելում շատ անգամ, բայց ո՞վ կը կամենայ նորանց նմանվել», պատասխանեց Պօղոսը հանդարտութեամբ:

— Ի՞նչ անեմ ունի լազարը, որ նրա մէջ արին պիտի թրջւմ, միտ կողմից մենք արդէն ունենք գիտութիւն կոչված սնդուկի բանալին և կարող ենք առանց հեռու գնալու գիտութեանց հետ բաւական ծանօթանալ, այն չափով, որչափ որ բաւական է մեզ կենսի գլխաւոր երևոյթները հասկանալու և հասարակութեան պիտանի անդամ լինելու համար:

«Համեմատելով մեր խնայածը Լավուազիէյի, Գարվինի հետ, մենք ի հարկէ բողբոջին տղկտ ենք», ասում էր Պօղոսը:

Եւ այդպէս մէկը չափազանց ուսումնասէր լինելով կամենում էր, որ երկուսն էլ գնան ուսանելու, իսկ միւրը նկատելով, որ երկարամիայ նեղութիւններից և չափազանց աշխատանքներից իրանց առողջութիւնը բաւական քայքայվել է և գնալով հիւսիս, դուցէ էլ աւելի սարսափելի տանջանքների պատճառն, որ անշուշտ իրանց անձը վտանգի կենթարկէ, խորհուրդ էր տալիս եղբորը բաւականանալ ունեցածովը և յետ գնալ հայրենիք մի գործով պարտապէս:

Վէճը վերջացաւ ընկերների միջամտութեամբ, որոնք որոշեցին որ երէց եղբայրը գնայ իր կամե-

անձերից սկսեալ մինչ յետին մշակը: Մարդ բողբոջին ապշում է տեսնելով թէ ինչպէս օրավարձ մշակը իր տաժանակիր աշխատութեամբ ձեռք բերած կօպէլը վառնում է օղեսան մէջ և թղթախաղում՝ այնտեղ, իր տանը, ցամաք հացի անգամ կարօտ թողնելով իր թշուառ ընտանիքը:

Ո՞վ պէտք է ժողովրդին հանէ այս վիճակից, ո՞վ պարտաւորութիւնն է հոգալ ժողովրդեան բարօրութեան համար: Քահանաների, — բայց տեղիս քահանաներից շատ զո՞ւ կը լինէինք, եթէ իրենց ամենապլխաւոր պարտաւորութիւնները գործնէ կատարէին բարեխղճաբար: Ուրեմն ուսումնարանի և ուսուցչական խմբի պարտաւորութիւնն է,—բայց կողբում չը կայ ոչ ուսումնարան և հետեւաբար ոչ ուսուցչական խումբ: Այո, չը նայելով որ կողբը մօտ 300 ծուխ ունեցող մի գիւղ է, բայց և այնպէս մինչև օրս չունի ուսումնարան և այս բանում ժողովրդին կամ քահանաներին մեղադրել արդէն անտեղի է: Սակայն պէտք է խոստովանած, որ ժողովրդի մէջ արդէն մի երկու տարի առաջ ծագել է ուսումնարան հիմնելու գաղափարը, որի համար ընտրել է հոգաբարձութիւն, յատկացրել է եկամուտի մի բաւական ապահով աղբիւր և շինել է տուել մինչև անգամ ուսումնարանի համար մի բնակարան ևս: Այժմ հոգաբարձութիւնն էլ բերել է տղանք մի երկուստարդ ուսուցիչ և ըստ ամենայնի երևում է, որ մտադիր են շուտով բանալ ուսումնարանը: Ահա հէնց այժմ հարկաւոր է թեմական տեսչի օգնականութիւնը, որպէս զի կարգին հիւր զնէ ուսումնարանին և տայ նորան ցանկալի ուղղութիւնը:

Հողային պակասութեան հարցը, ինչպէս ուրիշ տեղերի, նոյնպէս և տեղիս համար կենսական հարց է դարձած: Անցեալ ամիս վերջերում, նահանգապետի այստեղ եղած միջոցում, ժողովուրդը ի միջի այլոց, յայտնեց նորան իր նեղութիւնը և հողի պակասութեան վերաբերութեամբ Սակայն, որքան ինձ յայտնի է, հողի պակասութիւնը այստեղ աւելի նորա համար է դառնի, որ կենտրոնացած է մի քանիսների ձեռքում:

Այս տարի այս կողմերում հունձը առհասարակ բաւականացուցիչ է, ցորենի խալվարը (30 պուդ) արժէ տեղս 30 ռուբլի:

Շուտով կողբը ևս միացված կը լինի միւս լուսաւոր աշխարհի հետ փոստային հաղորդակցութեամբ: Մինչև այժմ յերանից կարո գնալու համար անպատճառ հարկաւոր էր Ալեքսանդրօպօլի վրայով գնալ, որով խիստ երկարանում էր ճանապարհը: Այս անյարմարութիւնը վերացվում է տեղութեան նոր ձեռնարկած կաղզուանից մինչև իրզիլի փոստային ճանապարհի բանալովը, որ պիտի անցնի կողբի վրայով: Աշխատութիւնները արդէն սկսած են այս ամառվանից և կաղզուանի ու կողբի միջոցում եղած փառնաւոր գիւղի մօտերից սկսելով՝ Երասխի ափով զալին են դէպի ցած: Բանում են Սպալեօբնի և Գերբէնդեան գունդերից մի-մի բաւալիսն զօրքեր:

Ներկայ տողերը գրելու միջոցումս այս կողմերի համեմատ Պետերբուրգ բարձր ուսման եւ տեղից, իսկ կրտսեր գնայ հայրենիք ծերունի ծրարներին միջթարբուր և այնտեղ մի գործով զբաղվելով իր կարողութեան չափ նպատէ եւրոյց կըբօրը:

Մի ամսից յետոյ մի կիրակի առաւօտ Պօղոսին նաւով ճանապարհ զրինք դէպի Ռուսաստան, իսկ Պետրոսը ճանութիւնն տալով ուսուցչութեան վկայական ստացաւ և գնաց իր հայրենիքը:

Գալով Գ. գիւղը նա նախ տեսութիւն գնաց գիւղի բոլոր ընտանիքներին և ապա խորհրց տէր հօրը, որ մի օր գիւղի նշանաւոր մարդկանցից ժողով կազմէ, որ խօսվի գիւղի մէջ ուսումնարան բացելու մասին: Որովհետեւ տէր Աւետիքը իր բարի բնաւորութեամբ մեծ համակրանք էր վայելում գիւղական հասարակութիւնից, ուստի կիրակի երկուցեան բոլոր հրաւիրվածները նշանակված ժամին ներկայացան:

Քահանան երկար խօսելով կարողացաւ շատերին հասկացնել, որ ուսումնարանը իրանց մեծ գիւղի համար անհրաժեշտ է:

Կրթված և համակրանք վայելող քահանան ինչպէս է կարող անել գիւղացու համար, մանաւանդ եթէ որդին էլ կատարելագործված մարդ է և սպարաւոր է ամեն բան զոհել չըջապատող հասարակութեան մէջ կրթութեան տարակիւս համար: Հայրը և որդին մեծ աշխատութիւն գործընելով կարողացան մի տարվայ միջոցում մի

մերում, (յիշեալ փառնաւոր գիւղի մօտերում) քրդական մի մեծ ներքին կուր է սպառնում: Ջիւնիքանի անուանեալ քրդերի ցեղապետը այս մօտ օրերումս յախչտակել փախցրել է Ջիւլանյի քրդերի ցեղապետի կնոջը, որի պատճառով միւս ցեղի դէմ: Ջիւնիքանի կողմն են և ջաւալիները: Կարսի և Երևանի նահանգապետները արդէն ձեռք են առել հարկաւոր նախազորույթեան միջոցները այս սպառնացող կուրի դէմ, բայց և այնպէս խօսվում է, որ իբր արդէն կուրը ծագել է:

Գիւղացի

ՆԱՄԱԿ ԱՆԱԿՔԱՆԱԳԻՑ

Սեպտեմբերի 14-ին

Շատ անգամ պատահում է մեզ գանգաւակել, որ մեր հայ ուսումնարանները նեղ վիճակի մէջ են նիւթական կողմից, որ մեր ուսումնարանների բիւջէտը տարեց տարի նուազում է և դա ստու չէ: Բայց դրա հետ միասին չէ կարելի չը խոստովանվել որ հայը ընդհանրապէս ուսումնասէր է, նա իր որդու կրթութեան համար չէ ինչպէս իր կօպէլները: Քանի որ, ինչպէս ասեցի—հայը ըստ մեծի մասին ուսումնասէր է, ինչու ուրիշ մեր դպրոցները նեղ դրութեան մէջ են: Ես կարծում եմ որ դրա պատճառը, ի միջի այլոց է—անհամբարաշխօթիւնը: Քիչ գումար չէր կազմի օրինակ, եթէ մենք հաշուէինք թէ որքան գումար է ծախսում Սխալաւաքի ժողովուրդը իր մատաղ սերնդի կրթութեան համար: Բայց ափսոս որ այդ ծախսը շատ անգամ անտեղի է և ապարդիւս... Մէկը տեսնելով, որ տեղաւոր ուսումնարանից աւարտեց իր որդին կամ դուստրը, վեր է աւելում անսովոր նրան թիֆլիս, Ալեքսանդրօպօլ, ուսումը շարունակելու համար և կլորիկ գումարներ ծախսում է իր դաւակը օտար քաղաքում անդէլու, բնակելու վարձ տալու վրա և այլն. այն ինչ այդ գումարները մայրենի քաղաքում ծախսելով կարելի էր ընդարձակել ուսման չըջանք տեղական ուսումնարանում:

Ի հարկէ որ այդպիսով մի աննշան փոքրամասնութիւն միայն կարողանում է միջոց տալ իր գաւակին՝ ուսումը շարունակելու, իսկ մեծամասնութիւնը—հասարակ դասակարգը, պէտք է բաւականապէս այնքանով, որքան կարող է տալ մի ուսումնարան՝ որի դասընթացը վերջանում է առաջին դաստիարակի իմ նպատակս չէ այստեղ խօսել այդ սահմանափակ դասընթացի պատճառով յառաջացած այլ անյարմարութիւնների մասին, ես միայն հետեանք ունեմ ի նկատի: Ո՞րքան տաղանդաւոր, ընդունակ, յառաջադէմ մանուկներ կորչում են մեզ համար, այն պատճառով որ տեղական ուսումնարանները անկարող են յաղեցնել նոցա ծարաւը դէպի ուսումն, իսկ ծնողը նիւթական միջոցից դուրկ լինելով, չեն

փոքրիկ ուսումնարան կառուցանել և ժողովեցին առ ժամանակ մօտ 30 մանուկներ, որոնց հետ սկսեց պարապել Պետրոս վարժապետը: Մի քանի տարվայ մէջ ուսումնարանը ծաղկեց և անուանի եղաւ չըջապատող գիւղերի մէջ, այնպէս որ վերջին տեղերից ոմանք մանուկներ էին բերում Պետրոս վարժապետի մօտ:

Հէնց այդ ժամանակները Պետրոսը պսակվեց Ծ. գաւակի մի ոչ այնքան հարուստ և ոչ այնքան աղքատ օրիորդի հետ, որը թէ և այն գեղեցկօհիներից չէր, որոնց շատ անգամ պատահում է մեզ կարգաւ բոմանների մէջ, բայց բաւական դուրեկան դէմը ունէր և որ զլխաւորն է կրթված էր: Նա էլ թիչ չէր օգնում նշանավոր նորա ձեռնարկութիւնների մէջ:

Մի առաւօտ Գ. գիւղում երկինքը չափազանց պարզ էր: Եղանակը անործելի էր, որովհետեւ գիւղեք փոքր ինչ անձրեկ էր: Գիւղացիները տեղ տեղ խմբված խօսակցում էին: Ամենքը դէմքերը տխուր էին: Երկուցու զանգալը ծանր կերպով հնչում էր և լսողների սիրտը հալ ու մաշ անում: Այդ տխուր հնչունները գոժում էին տէր-Աւետիքի երէց որդու թղթով:

Անբաղդ Պօղոսը Պետերբուրգ գնալով մտել էր տէխնօլոգիական ինստիտուտ և սարտափելի տանջանքներ կրելով հասել էր վերջապէս երրորդ կուրսին: Հէնց այդ ժամանակ հիւսիսային պարզ կլիման ազդեց բողբոջվին տկարացած Պօղոսի

կարող ուղարկել օտար տեղեր, ուսումը շարունակելու համար: Այդպիսի օրինակներ, տարաբաղաբար, պակաս չեն մեղանում. դրա թափառում են իբրեւ կենդանի կշտամբանքներ մեր անտարբերութեանը: Թող թոյլ տրվի ինձ ասել, որ այդպիսիները համարեա թէ անընդունակ են ուրիշ գործի, քանի որ դոցա ուշք ու միտքը գրաւում է մի զլխաւոր սէր—դէպի ուսումը: Մասնաւորում եմ խօսքս մի պատահու վրա, որ անցեալ տարի աւարտեց տեղիս հայոց ուսումնարանը իբրև ամենաառաջադէմ աշակերտներից մէկը. մի տարի շարունակ նա չէր կարողանում մի գործի կպչել և ահա այս օրերս մտել է մի այլ ուսումնարան, թէ և դրա դասընթացը աւելի սահմանափակ է իր աւարտած ուսումնարանի դասընթացից: Բայց նա մտել է այնտեղ ոչ թէ սովորելու, քանի որ սովորած է արդէն—այլ «ուսումնասանում է ինչու էլ ու համար»—ինչպէս ասում է ինքը: Այդ բողբոջ յետոյ՝ հրաւիրում եմ ձեռնհաս բարեխոս անձանց ուշադրութիւնը այդ պատահու վրա, որպէս զի դրա միջոց տային նրան իր ուսումը շարունակելու: Բաղաւոր կը լինեմ, եթէ այս տողերը արձագանք գտնեն:

Մի շարաթից աւելի է որ գրեթէ իւրաքանչիւր գիշեր աներ ու կըրպակներ են կողոպտում, զլխաւորապէս աղքատ մարդկանց, որովհետեւ այս վերջիններե տները աւելի թոյլ են շինված: Անցեալ օր, գողերը մտնում են մի տիկնոջ տուն, որի ամուսինը բացակայ է քաղաքից, և դուրս են բերում պղնձեղէն մի երկու ամաններ: Տիկնոջ ամուսնացրած դուստրը լսելով շարժումներ տան մէջ և պարտիզում, խլում է հրացանը, մեղմիկ զարթնացնում է մօրը և յուսադրելով նրան չը վախենալ, առնում է նրանից փամփուշտներ և երկու անգամ արձակում է հրացանը դէպի պարտէզ: Գողերը փախչում են: Մի քանից իւրաքանչիւրը գոռում գոռում է միայն այն ժամանակ, երբ անմիջապէս կողոպտել են նրա սեպականութիւնը, որիչների համար մենք սովոր ենք ունենալ ցընցեղ և ատամների միջից արտասանել այն վերին աստիճան վեաասկար «ինձ ինչը» որ ամեն գործունէութիւն, որ ասպարէզի վրա էլ լինէր—թուլացնում է. ամեն տեսակ եռանդ մարում, սառցնում է: Գիւս երեկ շատ երկար մենք կը տանվեինք հասարակական ցաւերի դէմ անհատական բողբոջներ բարձրացնելով, քանի որ մեղաւորում պակաս է այն օրակը, որ կապում է մի մեանց հետ հասարակութեան անդամներին, իսկ երբ մենք մեզ անկարող ենք պաշտպանել այն ժամանակ, գողերի, կաշառակերների, պղտոր ջրում ձուկ որսացողների աչքը լոյս:

Հանգուցեալ Գր. Պապկանցից յետոյ շատ սակաւ էր պատահում մեզ պատկերներ տեսնել «Մշակի» մէջ: Բայց այս տարի դարձեալ մի քանի հատ այդպիսի պատկերներ տպվեցան: Դա իմ կարծիքով ուրախալի երևոյթ է: Պատկերի մէջ կարելի է դուրս բերել ժողովրդական կենսի վրա: Նա թորացաւ ստացաւ և վերադարձաւ Գ. գիւղը 1878 թ-ի զարնան սկզբումը: Հայրենիքում նա փոքր ինչ լաւ զգաց իրան, բայց երբ աշնան անձրեկները սկսեցին տեղալ, կրկին մտաւ անկողին և էլ չը վերկացաւ:

Անցեալ տարի ես գնացել էի Գ. գիւղը փոքր ինչ մաս դալու, և ինչվանել էի տէր-Աւետիքի տանը: Պետրոսը ցոյց տուց ևս ինձ ուսումնարանը, որի մէջ բաւական աշակերտներ կային: Ուսումնարանին կից տեսայ ես մի փոքրիկ սենեակ, որ գրադարան էին կոչում, ուր մի պահարան գրեանք կային և սեղանի վրա դիզված էին հայոց յայտնի լրագրիւնները և ուսուց «Семья и Школа» ամսագիրը:

Կէսօրից յետ Պետրոսը ինձ տարաւ գերեզմանատուն և ցոյց տուաւ ինձ մի տապանաբար, որի մի կողմումը գրած էր, «այս է տապան Պօղոսի, որդու տէր-Աւետիքի, որ հանգեաւ ի Տէր յամի Տեառն 1878»: Իսկ տապանաբարի միւս կողմումը թէպէտ ոչինչ չէր գրած, բայց ինձ թուում էր թէ գրած է հետեւեալը. «Լաւ է ոտի մատ լինել, բայց առողջ, քան թէ զլիւի աչք լինել, բայց կոյր»:

Բազու. Ս. Թառայեանց

այնպիսի կողմերը, որոնք չեն լուսաորում արևոտային թղթակցութիւններով: Որ և է երևոյթ, թղթակցութեան մէջ հարեանցիկերսով յիշելով, չէ դարձնում ընթերցողի ուշադրութիւնը այնքան, որքան՝ երբ այդ երևոյթը նկարագրուած է պատկերով մէջ՝ իր մանրամասնութիւններով: Այս, ի հարկէ, դժուար է պատկերներ գրելը, որովհետև դրան համար հարկաւոր են մի քանի պայմաններ, որոնց իւրաքանչիւր մարդ չէ կարող բաւականացնել: Բայց դրան համար հարկաւոր չէ ճշտութեամբ թղթակցութիւնը գրելը և անպատշաճ լինելը գրված մի պատկեր, նա ունի իր առանձին գեղեցկութիւնը՝ երբ կենդանօրէն վերցրած է կեանքից: Երբ խտտութեամբ պահպանուած է կեանքի երևոյթիւնը, առանց աւելորդ զարդեր աւելացնելու, այլապէս ասած, երբ գրողը «գլխին զօռ է տուել»: Նմանապէս հարկաւոր է, որ գրողը լինի իր աւելորդ մանրամասնութիւնների մէջ և լինի իր նկարագրութիւնը, որ ճանձրով կապող է պատճառել ընթերցողներին: Այդ օրինակը մենք տեսնում ենք մի շատ գոռացող, կեղծ մատնի ազդի այն դրուածքների մէջ, որոնց համար մի անգամ մենք «անալի» էպիտէ-տան էինք գործածել, իսկ «Մշակի» գրաշարը սխալվել ու «աններելի» էր շարել (կան սխալ-ներ որ մի ճշմարտութիւն արժեն) — և որոնք բնականաբար կողմից արդէն ճանաչված են իրեն ամենալաւ միջոցներ անքնութիւնից տանջ-վողների համար:

\*\*\*

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարում սպում ենք պ. Ս. Թառայեանցի մի փոքրիկ պատկեր: Որքան էլ այդ պատկերը թերութիւններ ունենայ գեղարուեստական տեսակետից, անու ամենայնիւ, որպէս սկսող գրչի ծնունդը, վատ չէ և ուղիղ միտք է պարունակում իր մէջ: Այդ պատկերի գլխաւոր միտքն այն է, որ եթէ մի մարդու մէջ Ֆիդիկա-կան և մտաւոր կողմերը հաւասարապէս չեն զար-գացած, այն մարդը կարող է կեանքի համար նոյն իսկ անպէտք դառնալ:

Այս օրերս մենք այնչեղիք թիֆլիսի վերա-սպիւմ թաղը, որտեղից նոր կամուրջ է շինվում կուր գետի վրա: Այդ կամուրջը պէտք է կապի վերայի թաղը գերմանական կղզիւնի ասիւմ-թաղի հետ և ուղղակի կապի այն փողոցի հետ, որ անցնում է կրօնօթի ամառային բնակարանի մասունքով: Կամուրջի շինութեան աշխատանքը առաջ է գնում և որքան մենք կարողացանք նկա-տել քարեայ սիւները հիմնաւոր կերպով են շին-վում: Բայց մեր կարծիքով հողի կոյտը, որ ներ-կայացնում է արհեստական ճանապարհ դէպի կա-մուրջը, շատ հեռու է մտնում կուր գետի առաջ-ների մէջ, որոնք ամբողջապէս ջրով են ծածկում ջրի բարձրանալու ժամանակ և առաջին սիւնը, շատ հեռու է շինվում գետի բնական ափից: Բայց ուրիշ կողմից այդպիսով լինել կամուրջը աւելի կարճ է լինում, ուրեմն աւելի դիւրին է լինում կամուրջի շինութիւնը կառուցանելու:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են հետեւալով: «Ներքուստ էլ միտքն ի վանքը առաջարկել էր Վերդեան ճեմարանի ղեկավորին և պրոֆէսորնե-րին, որ նրանք համաձայնին աւելի փոքր բոճիկ-ներով ծառայել ճեմարանին, քանի որ վանքը պէտք ունի նիւթական խնայողութեան: Բայց ղեկ-ավորը և պրոֆէսորները պատասխանեցին, որ հարկ չը կայ առձեռններ փոքրացնել այլ նիւթա-կան խնայողութիւն կարելի է ուրիշ կերպ անել: Այն է ճեմարանի որդեգիրներից մի քանիսներին արձակել և նրանց երթնել դարձնել: Եւ ճշմարիտ, այսպէս էլ արեցին. մտ 60 հողի որդեգիրներից արձակեցան և խեղճեր սկսեցին թափառել դի-ւրում, իրանց համար ոչինչ ապաստան անգամ չը գտնելով: Վերջը, երբ վանքը և ճեմարանի վա-րձերը ծանր նիւթական խնայողութեանը և թափառ-բաւականութիւն և արտունջ են յարուցանում բը-նակիչների և առհասարակ հայ հասարակու-թեան մէջ, դարձեալ ստիպեցան ընդունել 60 հողի պատանիներին ճեմարանի որդեգիրների թուում»:

«ԿԱՅԿԱՅԷ» լրագրում կարդում ենք հետեւալով: «Այս երկու տարի է արդէն, որ Բագուի նաւթ-

արդիւնաբերողները գանգատվում են իրանց կը-րած արդիւնաբերական ճգնաժամի վրա. այդ ժա-մանակամիջոցում շատ միջոցներ առաջարկեցան թուղթակցութեան այդ ճգնաժամի վերականգնող-քութիւնը, բայց, այնու ամենայնիւ, դործերի գը-րութիւնը բոլորովին չէ լուսաորում և Բագուի կը-րօսի գնիցը ուսուցչութիւնը չուկաներում աւելի և աւելի ընկնում են: Վերոյիշեալ չուկաներում կէքօսի գինը կանոնաւորելու համար, սեպտեմ-բերի 15-ին, Վ. Ա. Պօլեթիկայի լոնդոնցի, Բագուի քաղաքապետը նաւթ արդիւնաբերողների ժողով կազմեց: Այդ ժողովը բաղմամբ էր և չափից դուրս գանազանակերպ էր իր կազմութեամբ, ներ-կայ էին, բացի Բագուի նշանաւոր գործողներից, պետական կազմերի միջնաստիճանի խորհրդի անդամ Պ. Գ. Արիստով, նաւթարդիւնների անցկացնելու համար իր առաջարկութիւններով յայտնի Տվիլը, Ն. Նիկոլաձե, պ. Խանի-կով և շատ ուրիշները: Վերջինը առաջարկեց Բա-գու-Ֆաթուհեան նաւթանցք շինել: Պ. Պօլեթիկա-հարց բարձրացրեց կէքօսի գինը կանոնաւոր-ելու մասին և մի ճառ խօսեց, որը տաք վիճա-բանութիւնների առարկայ դարձաւ:»

«Тифл. Объявления» լրագրին հաղորդում են, որ Թիֆլիսի ծանօթ Societé Belge d'Exportation Jules Vanderlaet et C<sup>o</sup>. Ֆիրմայով բէջկա-կան ընկերութիւնը, որը յանձն էր առնում իր հաշուով շինել քաղաքային ջրանցքը, 23 տարում պարտքը վճարելու պայմանով, հրաժարվեցաւ դաշնագրի կապելուց:

Նոյն լրագրից հաղորդում է, որ սեպտեմբերի 19-ին, քաղաքային դումայում քննվում էր քա-ղաքապետի առաջարկութիւնը՝ քաղաքի կողմից նախկին Փոխաբքայ Օգոստափառ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաձեի գինուարելու մասին:

Նոյն լրագրից լսել է, որ քաղաքային վարու-թիւնը մշակում է Թիֆլիս քաղաքը գաղով լու-սաւորելու վերաբերեալ հարցը:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Սոլուկի թաղի վճարահանակալ փողոցի վերին մասում քաղաքային վարչութիւնը թող է տալ ընակիչ-ներին տներ կառուցանել այնպիսի առիւթում, որ շինութեան ժամանակ կարող է քանդվել կամ մի ուրիշ տուն, կամ սարը, կամ հող թափվել և վնասել թէ բնակիչներին և թէ աշխատող մշակ-ներին: Շինութիւնների այդպիսի նախաձեռնի հաս-տատելը կարող է վատ հետևանքներ ունենալ: մասնաւոր որ օրէնքի համաձայն տները այնպէս պէտք է կառուցվեն, որ ուրիշ շինութիւններին և նրանց մէջ բնակվող մարդկանց վնաս չը հասցվի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ռուսաց կայսրի այցելութիւնը Վրաստանին «Pembroke-Castle» շողեւանի վրա և նրա մտ նախաճաշելը իր վրա դարձրեց եւրոպական նշա-նաւոր բոլոր լրագիրների ուշադրութիւնը: «Jour-nal des Débats» այդ առիթով ասում է: «Հասա-րակական կարծիքը ընտելացել է թաղապետների տեսակցութեանը, որոնց նա աւելի փոքր նշանա-կութիւն է տալիս, քան թէ առաջին միջնաստ-րի ճանապարհորդութիւններին: Վրաստանի կօ-պէնտաղէն հասնելը աւելի շատ աղմուկ հանց էր Եւրոպայի մէջ, քան թէ սերբիական, ռումինա-կան և սպանիական թագաւորների ճանապարհոր-դութիւնը: Բրիտանական կառավարութեան առաջ-նորդի խօսակցութիւնները բաղմամբ դատողու-թիւնների առիթ տուին, և պէտք է խոստովանել, որ այդ առիթով Վիեննայի, Բեռլինի և Լոնդոնի լրագիրների մէջ ծագած պոլեմիկան չին լուսա-ւորում ենթադրված համաձայնութիւնը, որ իրր թէ պէտք է կայանայ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ: Մենք տեսնում ենք, որ «Pembroke Castle» նաւի վրա տեղի ունեցած խօսակցութիւնները ամենին նման չեն այն զաշխններին, որոնք իւ-րաքանչիւր տարի նորոգվում են Չայնոսի և Գաշաշի մէջ: Միջնաստից կախված չէ կարգա-դրել Մեծ Բրիտանիայի ոյժերը իր կամքի համե-մատ և այնպիսի բովանդակ, երբ ոչինչ չէ սպառ-նում եւրոպական խաղաղութեանը: Վրաստան չէր կարող յանձն առնել ուսու-անդրական դաշ-

նակցութիւն կապելու պատասխանաւորութիւնը, որի նպատակը լինէր դէմ դնել աւստրօ-գերմա-նական դաշնակցութեանը: Անկարելի է երևա-կայական չը համարել կօպէնհագէնի մէջ արած փորձերը Ռուսաստանի և Անգլիայի շուրջը խմբե-լու համար Գանդիայի և Շվեյցարիայի, ինչպէս Բու-մինիա, Սերբիա, և Խաղա խմբի են Աւստրիա-յի և Գերմանիայի շուրջը: Ընդհանուր խաղաղու-թիւնը մեծ վնաս կունենար, եթէ Եւրոպան երկու-րամիկների լաճանդէր: Վերջը «Journal des Dé- bats» լրագիրը ասում է, որ Վրաստանի ճանապար-հորդութիւնը քաղաքական միայն այն նպատա-կը կունենար, որ առաջն առնվի այն անհամա-ձայնութիւնների, որոնք կարող են ծագել Ռու-սաստանի և Անգլիայի մէջ կենտրոնական Ասի-այի և Տաճկա-Հայաստանի առիթով:

«Temps» լրագիրը նոյն առարկայի մասին հետեւալ կերպով է գտնում. «Ռուսաց կայսրը ընդունեց Վրաստանի հրաւերը և այցելեց նրա նաւը: Այդ չափազանց քաղաքավարի վարմունքը զանազան դատողութիւնների առիթ տուցեց: Վիեն-նայի լրագիրները չեն կարողանում երևակայել, որ անգլիական առաջին միջնաստի ճաշէ երկու-թագաւորների հետ և մի և նոյն ժամանակ քա-ղաքական դաշնակցութիւն չը կապվի Գերմա-նական լրագիրները ընդհակառակը կարծում են, որ այդ այցելութիւնը մի խաղաղ ցոյց է: Միայն Pall-Mall-Gazette», որ միջնաստի հետ կա-պեր ունի, կօպէնհագենի տեսակցութեանը մի յօ-դուած է նուիրում, որով աշխատում է ունչացնել այն բոլոր կասկածները, որոնք կարող են ծագել Բեռլինի և Վիեննայի մէջ: Լրագիրը ասում է, որ Մեծ Բրիտանիան չէզոք կը մնայ և որ Վրաստա-նից կախված չէ անգլիական քաղաքականութեան ուղղութիւնը:

Բօլզարական կուսակցութեան բոլոր գլխաւոր առաջնորդները, որոնք 2 տարի առաջ ար-տասանան քաղթեցին, վերադառնում են Բօլզա-րիս: Կարալիով և Սլաւկիով ազատամիտ նախ-կին միջնաստիները Սօֆիա ուղևորվեցան գններալ Սօրբլիի հրահրում:

«Կօլմարից (Ելզաս-Վոստրիւնիայի մէջ) «Jour- nal d'Alsace» լրագրին գրում են, որ այնտեղի ռուսամարտիներում անդադար հալածում են Ֆը-րանսիական լեզուն: Լրագիրները ի գուր են բո-ղոքում, աւելով, որ աշխարհագրական դիրքի հա-մեմատ այդ լեզուն նոյնքան անհրաժեշտ է, որ-քան և գերմանական լեզուն, որ առաջվայ ժա-մանակներում երկու լեզուներն էլ աւանդում էին այդ ռուսամարտիների մէջ առանց մէկը միւսին խանդարելու, բայց ոչինչ չէ օգնում: «Եթէ մեզ-նից կը խլեն դրասը, քերականական և բառա-բանի լեզուն, ասում է թղթակցիցը, այնպէս որ մենք չենք կարողանայ դրա առաջն առնել, ու-րեմն մենք գոնեա կը պահպանենք խօսակցական լեզուն, նրա դարձուածները, կազմակերպութիւնը և ոգին: Այդ մեղին է կախված: Այդ միջոցը հա-սարակ է և հեշտ և մատչելի է բոլոր ծնողներին, որոնք խօսում են Ֆրանսերէն: Կրա նպատակը պարզ է օրինաւոր է, դա ապտոստութիւն չէ, այլ մի պաշտպանութիւն, որ բացառապէս մեր կամքից է կախված:

«Պէտք է ցատվ յիշել, ասում է «Nouvelle Revue» լրագիրը, որ Խաղաղութիւնը ղեկի Ֆրանսիան հետզհետ սաստկանում է: Բա-ւական է, որ մի անշնան դէպք պատահի, մի յօդուած, (որ կարող է հեղինակի անձնական կար-ծիքը լինել), որ այդ զգայունքը կատարելապէս արտայայտվի խաղաղական մամուլի մէջ: Ֆրան-սիայի համակրութիւնը, որ յայտնվեցաւ Իսկիի կղզու աղետի առիթով, փոխանակ Խաղաղութիւնը մեղմեցնելու մեղմացնելու, նոր յարձականք-ների առիթ տուցեց Ֆրանսիայի վրա: Անկարելի է, որ Խաղաղայի արտաքին քաղաքականութիւնը նպատակ է երկու ազգութիւնների թշնամու-թեանը: Գէպէտեմն միջնաստիները միացաւ աւստրօ-գերմանական դաշնակցութեան հետ: Ինչ որ յայտնի է այդ դաշնագրից, ապացուցանում է, որ նա ձեռնտու չէ Խաղաղայի համար: Բայց թող չը մոռանան, որ կան ընդհանուր շահեր և պէտք է յուսալ, որ Ֆրանսիան էլ ուրիշների հետ ընդ-հանուր շահեր ունի, որոնք մեզ համար բարե-կամներ կը գտնեն:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Berliner Tageblatt» լրագիրը ասում է, որ Փարիզի պատուաւոր աներում Տուրգենիւի անունը

խօսակցութեան առարկայ է դարձել: Նրա մա-սին եղած յիշողութիւնների թուում, ի միջի այլոց պատմում են մի անէկզօտ, որ ասել է մի անգամ ինքն Տուրգենիւի: Ֆրոբերի տան մէջ եղած մի երեկոյթի ժամանակ խօսք բացվեցաւ ռուսաց ժո-ղովրդական կեանքից վերցրած անէկզօտների մա-սին: Տուրգենիւի յիշողութիւնը վառարանի վրա, իրան յատուկ թովզութեամբ պատմեց հետեւալը. «Մէկ երիտասարդ կալուածատէր իր կալուածից դնում էր Պետերբուրգ, այնտեղ ձմեռը անցկացնելու նպատակով: Գետի ափին նա հանդիպեց մի ջա-հիլ գեղջիկուհու, որը այնպէս գեղեցիկ էր, որ նա կանգնեցրեց իր կառքը և մնաւ բարեաւի ժամա-նակ ասեց նրան. «Սօֆիա Անդրեւիւնա, ես գտնում եմ քաղաք: Ի՞նչ բերեմ քեզ համար, թաշկինակ թէ գլխի զարդարանք: Կս կը բերեմ զարմանը, ինչ որ դու կը ցանկանաս»: Սօֆիան պատաս-խանեց. «Իմ բարի պարոն, ես ոչ թաշկինակ եմ կամենում և ոչ էլ գլխի զարդարանք, այլ ինձ համար քաղաքից բերեցէք այն սպանից, որ գործ են ածում գեղեցիկ տիկինները»: Պարմը ժպտալով հրամայեց կուսպանին քշել ձիաները և շուտով դարպից մտածել իր գեղջիկուհու մա-սին: Բայց դարձեւ եկաւ, և նա պատրաստվում էր կրկին իր կալուածքը վերադառնալ: Հէնց այն ժամանակ կալուածատէրը յիշեց ջահիլ աղջկայ համեստ ցանկութիւնը: Վերադարձին նա կրկին պատահմամբ հանդիպեց աղջկան գետի ափին, հէնց նոյն տեղի վրա, որտեղ մնաւ բարեաւ էր ասել նա գեղեցիկուհուն, և տուցեց նրան նրա ցանկացած ընծան: Նա վաղեց դէպի գետը, ստա-ցած սպանով մաքուր լուսեց ձեռքերը, մտեցաւ կառքին և, սաստիկ կարմրելով, ասեց ցածր, համարեա շշնջելով. «այժմ, պարոն, համբուրի իմ ձեռքը, որպէս դու համբուրում ես քաղաքում գեղեցիկ տիկինների ձեռքերը»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: Աշ-նանը պետական խորհրդին մի քանի նա-խագծեր կը ներկայացվեն կովկասեան բժը-կական հիմնարկութեան առանձնացած դիրքը օշնացնելու և բժշկական կազմակերպութեան մէջ մի քանի առանձնայատկութիւններ ստեղ-ծելու մասին: Բեռլինցունդում ջրի մէջ ըն-կվում «Горлица» և «Корюшка» նա-ւերը բարձրացրած են: «Горлица» եկաւ կրօնշատ իր սեփական մեքենայով, իսկ «Корюшка» ուրիշ նաւով քաշեցին:

ՓԱՐԻՋ, 19 սեպտեմբերի: Կիսապաշտօ-նական «Temps» լրագիրը ցատում է սպա-նիական թագաւորի դէմ եղած ցոյցերի մա-սին և ասում է, թէ անկարգութիւններ գոր-ծողները Հէնց այն անձինքն են, որոնք յիշ-էին գցում Թիբրի և Գամբետտայի վրա և չեն գնահատում Ֆրանսիայի շահերը և ուրիշ ազգութիւնների պատիւը: Մի և նոյն ժամանակ լրագիրը յոյս ունի, որ Սպա-նիան կը զանազանէ Ֆրանսիական ամբողջ ազգի տրամադրութիւնը մի քանի խելագար-ների վարմունքից: Իսկ ինքը սպանիական թագաւորը համոզմունք յայտնեց, որ ցոյ-ցերը դործեցին մի քանի անձինք, որոնք մեղքեցրած են: Երէկ պոլիցիայի բնակա-րանի մէջ զազի սաստիկ ճայթիւն պատա-հեցաւ: Շինութեան մի մասը վնասվեցաւ: Մի քանի մարդիկ վիրաւորված են: Այստեղ լուր է ստացված նոր անկարգութիւնների մասին կանտօնի մէջ:

ՋԱԳՐԵՐ, 19 սեպտեմբերի: 19 մեղա-դրածներից պետական յայտագիրները պօ-կիլու գործի մասին 29 դատաւարաւորված են բանտարկութեան մի շարքից մինչև 6 ամիս, մնացած 9 հողի արդարաց-րած են: Պաշտպանները դատաւորը սպօ-րիսի են համարում և կը պահանջեն նրա ջնջելը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒԶԱՎԵՏԱ ՖՐԱՆՑՈՎՆԱ ՇԱՅԻՆՈՎԱ
ցաւով յայտնում է իր ամուսին պաշտօնից հրաժարված զլիւսաւոր բժիշկ ստատսկի սովետնիկ ՆիկիՏ ԱՐՐԱՄՕՎԻԶ ՇԱՅԻՆՈՎԻ մահուան մասին և խնարհաբար խնդրում է հանգուցեալի ազգականներին, ծանօթներին և նրա հետ ծառայողներին յարգել հանգուցեալի յիշատակը, ներկայ գտնվելով յուղարկաւորութեան հանդիսին: Հանգուցեալին կը տանեն իր բնակարանից Սապէօրնայա փողոց № 26, առն ջերատկեղիչի, վանքի մայր եկեղեցին սեպտեմբերի 22-ին, առաւօտեան 10 ժամին: 1—1

Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային առաջնորդ սրբազան Արիստակէս Եպիսկոպոս Սեղազեանի թոյլտուութեամբ ներկայ
սեպտեմբերի 15-ից
բացվում է
"ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ"
Վանաց Աւագ եկեղեցւոյ հովանաւորութեամբ և նոյն եկեղեցւոյ հանդէպ № 5.
Մանուկները ընդունելութիւնը շարունակվում է մինչև առաջիկայ հոկտեմբերի 1-ը:
Օր. Մարիամ Մամիկոնեանց: 3—5

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Ե Ն
Հետեւեալ մէկ արարուածով կատարելագործվանքը.
Եւ չարս ինչ կամ երկու սիրահար 35 կ.
Մօրա . . . . . 40 >
Կուսակազմաւոր ես էի . . . . . 55 >
Խէչոյի թուղը . . . . . 35 >
Սէր կամ մահ . . . . . 35 >
Գիմը. ЭРИВАНЬ, ЭМИНУ Теръ-Григорянцу. 1—10

Ներկայ դպրոցական տարուայ սկզբից Շամբուեցւոյ եկեղեցւոյ ծխական դպրոցը ժամանակաւորապէս տեղափոխված է պ. Յ. Տէր Ղազարեանի տանը Հաւլարարի հրապարակի մօտ Արևանգերի փողոցի վրայ № 10: Աշակերտները ընդունելութիւնը կը տեւի մինչև ամսոյ վերջը:
Ուս. դպրոցի՝ Գ. Մատինեանց 2—5

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ ցանկանում է ԴԱՍԵՐ ունենալ ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ դասընթացքի ԲՈՂՈՐ առարկաներից կամ ԿՕՐԵԿՏՈՒՐԱԿԱՆ աշխատանք ուսաց լեզուի: Հասցեն, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՍՈՒՆՈՅ: 8—10

ՎՕՋՆԵՒԵՆՍԻ փողոցում № 11. ՎԱՍԻԼ ՂԱԼԱՄԲԱՐՅԱՆԻ տնկումն արվում է ԲԵԷՆՈՎ միջի կարգում 5 և 3 սենեակ, ներքի կարգում 5 սենեակ բոլորն իրանց պիտոյքներով: զինը հարցնել Գօրջօփօի փողոցում Վասիլ Ղալամբարեանցի ԽԱՆՈՒԹՈՒՄ: 3—3 (1)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒՆ ԴԱՆՈՅ

(ԿՈՒԿԻՍ, ՎԱՐԱՆՑՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԳԵՊ)
Ունի սենեակներ հիւանդներին և ծննդիկաներին համար: օրական 2-ից մինչև 4 մանկէթ և ամսական 50-ից մինչև 100 մանկէթ վարձով: Երթեկի հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժիշկների համարժեքի (Կօնսիլիում) համար 3 մանկէթ, չբաւորները անվճար:
Հիւանդները ամեն օր ընդունվում են.
Առաւօտեան՝ 9—12 ժամ, ՆԱԻԱՍԱՐԻԵՆԱ—վերաբուժական, վնասակար և ատամի ցաւերի համար: 10—10 1/2 ժ. ԲՈՒԿՎՕՎ ՍԿԻ—մանկական և ներքին ցաւերի: 11—1 ժ. կին-բժիշկ ՍԱՐՕԿԻՆԱ-ՇՅՆԻՐԻՆԻՆԱ—կանանց, և երեխայոց ցաւերի: 10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ԲԷՅԹ—աչքացաւի: 11 1/2—12 1/2 ժ. (երկուշաբթի), ԲԱՐԱՅԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի: Երեկոյեան՝ 5 1/2—6 1/2 ժ.—ՆԱԻԱՍԱՐԻԵՆԱ—ամեն օր:
ՍԱՐՕԿԻՆԱ-ՇՅՆԻՐԻՆԻՆԱ—երեքշաբթի և հինգշաբթի:
ԲԱՐԱՅԵԱՆ և ԲՈՒԿՎՕՎ ՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ:
Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկներին)—չորեքշաբթի և շաբաթ—6 1/2—7 1/2 ժամը երեկոյեան:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԻԵՆԱՅ (բնակվում է նոյն հիւանդանոցում):

ՊԱՍՏԱՌ (օրոյ) ՏԱՐՆՕՊՈՒ ԵՂՐԱԿՆԵՐԻ ԳՕՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՇՏԵՍԻ ՄԵՋ:

Լօրիս-Մէլիքօվսկայա փողոց, տ. Զուբալօվի, հոգեւոր սեմինարիայի հանդէպ:
Ստացված է մեծ քանակութեամբ ՊԱՍՏԱՌ (օրոյ) 12 կօպէկից մինչև 5 ռուբլ ԲՈՒԼՕ:
Քանակութեամբ գնողներին ԶԻՋՈՒՄՆ կը լինի: 25—25

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Միակ գործակա ԼԻԱԿԱՆ Խ տեղը կան ամեն իր համար մեծ ԳՐԻՉՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱԲ, ներ, գմուռ, ՄԱՐԻՆԵՐ, պենակ, ներ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, ս ներ, ԲԱՋԱԹՈՒՐարկու կակերտ ՏԻՆԵՐ, վրագոտի լուծիւն ԱՆԳԱՆՈՒԹ: Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամեն ձեռ 25% ռուբլ տեղ: Կան թուղթ, տետրակ-ՏԻՏՆԵՐ, քարեգ-ԳՐՁԱԿՈՒԹ, քակամաններ, ՄԿՐԱՏ-րոցներ, խալիչա-ՄԱՀԱԿԱՆ, վե-համար իրեր, ԳՕ-ներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գրաչներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուսնալու ամաններ, Ֆիլտրա՝ կրանչիցներ, այգու մլրասներ, շորի շէտակա-զլիկ, երկաթէ թելերից, ձիու համար: Մա-կնետօշներ: Բժշկական թուղթ փատերկրօք-տի համար և այլն և այլն:
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ: 44—100



ԱՆԳՐԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

Table with 6 columns: Կայարան, Գալիս է, Գնում է, Կայարան, Գալիս է, Գնում է. listing train routes and fares.

Table with 6 columns: Կայարան, Գալիս է, Գնում է, Կայարան, Գալիս է, Գնում է. listing train routes and fares.

Table with 6 columns: Կայարան, Գալիս է, Գնում է, Կայարան, Գալիս է, Գնում է. listing train routes and fares.

Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇՏԵՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ
ԱՐՄԵՆՍԿԻ ԲԱՋԱՐ, ԿԱՏՈՒՉԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկա-թոռներ 6 ռ., դիւժիններ 12—25 ռ., կաշեի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀԱՍԿԱՆՆԵՐ, ճանապարհի մահապախներ, պահարաններ, ծալվող սամփարներ: Չեմօզաններ 2 ռ. 75 կ.—26 ռ., սակօ-յաժ ձեռքի և ուսից կակերտ, ճանապարհի սուվաններ, ձԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՎԵՐ 5 ռ. 50 կ.—30 ռ.:
Սամօվարներ, խոհանոցի պղնձ ամաններ, կօֆէյնիկ, թէյյաններ, ութո-ներ և աղալու գործիք, դերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐ-ՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ռ., երես լուսնալու պղնձ և ժեստի ամաններ:
ՊԱՍԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ռ., տուրքի հայելներ 2 ռ. 40 կ.—13 ռ., զանազան մետալների մամակներ 1 ռ.—15 ռ., սեղանի գրաչներ 4 ռ. 50 կ. և թանդ, թէյի գրաչներ Ֆրանսի, մեխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, զանակներ, պատառաքաղը 2 ռ.—26 ռ.:
ՎԱՐՆԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ուսական և անգլիական պողպատե և երկաթէ զանակներ, յայտ-նի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի:
ԲԷՎՈՎԱՆԵՐ զանազան տեսակի 3 ռ. 50 կ.—35 ռ., պատրօններ լեվոյիչը-ների համար, հրացան 6 ռ. և աւելի, զանազան վեշակներ, կշիռքներ: Աղ-լիական և ամերիկական կշիռկա 50 կ.—2 ռ. արջիքը:
Մշտապէս ունեմ 10,000 Ֆ. ԹԷՑ Պօսոյի եղբայրների, կաֆէ ՄԻՆԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորիկէն էյնեմի, ՌԷՑԳԱՐԿԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օղը-կօշօն) ձկնօղ փռչիք, պուլքա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ:
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի զանազան ԱՊԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քակներ, սանդղներ, շապիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, զինուո-րական գամշի ձեռնոցներ, գարուս, թէյեր, բրօնզի և մարմարի մի թանաքաման-ներ, միլրամաններ, գրիչներ, մտախներ, գրչակօթեր, սուրբուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն:
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պօրկա) հանքային ջրերի, գարեջրի, դի-նու և դեղատան սպրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:
Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս:
Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ:
Օտարաբարաբացիք կարող են զիմել. ТИФЛИСЬ. М. Н. ТЕРЬ-НИКОГОСОВУ. 47—100

